

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միջին խմբագրատան միջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է Լ Է Ք Օ Ն № 253.

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերից)

Յայտարարությունը ընդունվում է առան լեզուով.

Յայտարարությունների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ.
Տ է Լ Է Ք Օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՆԵՐԿԱՅ 1898 ԹԻՒ

ՄՇԱԿ

ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

«Մշակի» տարեկան գինը թէ՛ Ռուսաստանում և թէ՛ արտասահմանում 10 ռուբլի է, տասն
և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝
6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., մի
ամսականը 1 ռուբլի:

Թիֆլիսում գրվում են խմբագրատան և Բարձրակարգ փաթեցման միջին:
Ուրիշ քաղաքներից պետք է գրիմը այս հասցեով. ТИФЛИСЪ, редакция „Мшакъ“, իսկ
արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien „Mschak“.

Յայտարարությունները ընդունվում են թէ՛ հայերէն, թէ՛ ռուսերէն և թէ՛ օտար լեզուներով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հեղինակաւոր կարծիք. Փաստերի յեղաշրջում.
— ՆԵՐԿԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Արարիկա-
բից. Նամակ Շուշուց. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՆ-
ՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Յուսկան ցնորներ. Սիւ-
նիստների երկրորդ ժողովը. Արարիկա լուրեր. —
ՀԵՌԱԿԱՆԱԿԱՆ. — ԲՈՐՏԱՆ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ-
ՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Պարսկաստա-
նից. Նամակ Ամերիկայից:

ՀԵՂԱՔԱԿԱՆ ԿՈՐԾԻՔ

Նշանաւոր Ֆրանսիացի գրող ակադեմի-
կոս Ժիւլ Լամարտը հրատարակեց մի խիստ
յօղուած, որով պաշտպանում է թէպէտ
կան կրթութիւնը և հրաւեր է կարգում
շատապէս այդ կրթութեան դպրոցները:
Բէլաթիան կրթութեան ներկայ պաշտպա-
նութիւնը նշանաւոր է և այն կողմից, որ
Ժիւլ Լամարտը առաջ յայտնի էր իբրեւ
կրթութեան կրթութեան կողմնակից, իսկ
այժմ, տարիներ անցնելուց յետոյ և, ինչ-
պէս ինքն է ասում, լուրջ մտածողութիւ-
նից յետոյ, եկել է իր այժմեան կարծի-
քին: «Ես միայն մի բանի եմ պէտքական,
ասում է Ժիւլ Լամարտը, այն է՝ գրելու.
բայց ամենին այն կարծիքն էմ, որ իմ
գրելու ընդունակութեամբ ես պարտական
եմ լատինեանին: Ո՛չ դուք, ո՛չ ես, չենք
վստահանայ հաւատացնել, թէ աւելի լաւ

ենք գրում, քան Լուի Վելլիս կամ Ժորժ Զանդը,
մինչդեռ այդ գրողները ծանօթ էին կա-
սեցնելին: Ես ամբողջ տասներկու տարի
գրադպեցի լատինեանի և լուսնաբանի
այժմ աւելի և աւելի եմ համոզվում, որ
ես ոչինչ չը գիտեմ: Ես չը գիտեմ անգլի-
էն լեզուն, որով խօսում է մարդկութեան
ամբողջ կէսը. ինչ վերաբերում է իմ գե-
րմաներին գիտութեան, նա կարող է մի-
այն ժպիտ յարուցանել: Դուք էլ դուք կա-
սեք, թէ ինձանից էր կախած, իմ պա-
տանի հասակում, աւելի լաւ պարագայ,
աւելի ջանասէր լինել. սակայն ինչով եմ
ես մեղաւոր, որ շատ ուրիշ մանուկների
նման ես միայն միջակ ընդունակութիւն-
ների տէր էի. ամենքն էլ կանել էին
աւանդութիւններով օրաբարձրված մեռած
լեզուները, որոնցից ես այնքան քիչ օգուտ
եմ տեսել:

Ժիւլ Լամարտի ձայնը տպաւորութիւն
գործեց: Նատենի, որոնց յայտնի էր նրա
հին կարծիքը, մեծ զարմանք պատճառեց
ներկայ կողմ: Իսկ հասարակական կարծի-
քի վրա առհասարակ նա իր համոզիչ լեզ-
ւով և վճռական եզրակացութեամբ ազ-
դեց գրական կերպով: Ֆրանսիայում ար-
դէն մեծ դեր են խաղում թէպէտական, կամ
ինչպէս այնտեղ ընդունված է կոչել «ժա-
մանակակից» դպրոցները: Այդտեղ չը

կան հին լեզուներ, իսկ նրանց փոխարէն
աւանդվում են երկու նոր լեզուներ: Գիտ-
նական առարկաները պատկանելի տեղ են
բռնում և տալիս են ուսանողին լուրջ ու-
սում: Կրթական լեզուների ընթացիկ և
մեքենայական դասերը փոխարինել են
կենդանի և հասկանալի դասերով:

Սակայն, տարաբանտարա, աւանդու-
թիւնները զօրեղ են և պաշտօնական շըր-
ջաններում ու դպրոցական ստալարեզում
գեո կրթական կրթութիւնը մեծ հա-
մարում ունի, իբրեւ աւելի բարձր, աւելի
լուրջ: Այդ պատճառով ամեն մի նոր հե-
ղինակաւոր ձայն, որ պաշտպանում է
թէպէտական կամ ժամանակակից դըպ-
րոցների բարձրացնելու առաջարկը, գրա-
կան դեր կարող է կատարել, և այդ ոչ
միայն իր երկրում, այլև իր երկրից դուրս,
ուրիշ երկրներում, որտեղ նոյնպէս շա-
րունակվում է կրթական կամ թէպէտական
կրթութեան գերադասութեան վէճը: Յոյս
ունենանք, որ Ժիւլ Լամարտի ձայնը անկեղծ
չի մնայ նաև Ռուսաստանում:

ՓԱՍՏԵՐԻ ՅԵՂԱՔԱՐԾՈՒՄ

Երկարագրելով այն աղետները, որոնց ենթարկ-
վեցին Թիւրքիայում թէ՛ կաթոլիկ և թէ՛ լուսա-
ւորական հայերը, յայտնելով ցաւ և յուսահա-
տութիւն այն պատճառով, որ միջոց չը կայ օգ-
նել բոլոր թշուառներին, վերալինել քանդված ու
այրված եկեղեցիները, դպրոցները, տները, Ա-
ղաբեան կցում է.

«Թող ներքի մեզ, սակայն, մի նկատողութիւն
անել. այն մարդկանց խռովութիւններից յե-
տոյ, որոնց ենթակայ եղաւ հայ ազգը, Արեւ-
մուտքի մի քանի գրողներ և հրատարակաւոս-
ներ իրանց դատաւճիւր անցնելու մասին աւելի
լաւ կարող էին արտասանել, քան արեւ են,
մահաւանդ որ բարեխղճ տեղեկութիւնների և
հիշող մահաւանդութիւնների պակասութիւն չը
կար: Քանի քանի յօդուածներ, բրօշուրներ, ամ-
բողջ գրքեր հրատարակվեցին այդ ողբերգական
դէպքերի մասին, որոնք ճշմարիտ իրողութիւն-
ներ պարունակելով հանդերձ, վերադրել են՝ եր-
բեմն որան, երբեմն նրան այնպիսի մտադրու-
թիւններ և դէպքեր, որ բոլորովին զուրկ են ե-

ղել ճշմարտութիւնից: Ապա խօսելով Վիկտոր
Բէրարի ընդադառնութեան և ազգային սահմա-
նադրութեան մասին, և յայտնելով թէ իր յայտնած
կարծիքը՝ սահմանադրութեան մասին, հայ ազգի
ընթացիկ մասի կարծիքի արտայայտութիւնն է,
պատրիարքը շարունակում է. «Հայ ազգի այդ խո-
հեմ և առողջամիտ մասը՝ հրահանգված տխուր
փորձառութեամբ, համոզվել է, որ մեր պատ-
րիարքարանի բռնած դիրքը խիստ կորեկտ է
եղել՝ կայսերական կառավարութեան, ազգի և
քաղաքակրթված Արեւմուտքի վերաբերմամբ, և
այդ պատճառով միակ խելացի դիրքն է, որ
պետք է այտահետ ևս պահպանել... Եւ մենք
հաւատարմութեամբ պահպանել ենք այդ դիրքը
առանց մոլորվելու այն անմիտ և խելացի
թելադրութիւններից, որոնք անվստահ են արե-
ւելքի գործերին անտեղեկ և անփորձ անձանց
կողմից: Մենք համոզված ենք, և մեզ հետ հա-
մոզված են հայ ազգի ճշմարիտ բարեկամները,
որ այդ է ազգի փրկութեան միակ ճանապարհը:
Մեր համայնքի երեւելիները ժողովը, որ գումար-
վեց վերջերս, ջերմ կերպով հաւանութիւն տը-
ւեց մեր վարմունքին և չը վարանեց նկատել
մեր վարմունքը իբրեւ զիւստուր պատճառ այն
բարոյական հեղինակութեան, որ մեր պատ-
րիարքարանը կարողացաւ ձեռք բերել այդ ա-
ղետային տարիների ընթացքում» չը նայելով իր
կրած ծանր կորուստներին:

Դա փաստերի յեղաշրջումն է: Բայց դիմեք
փաստերին. ինչպէս յայտնի է, թիւրքահայոց
Սահմանադրութիւնը հաստատվեց 1862-ին. դա,
խիստապէս մի կանոնադրութիւն էր, որով հայ-
լուսաւորական համայնքը Թիւրքիայում պէտք է
կառավարէր իր ներքին գործերը: Նա ամենին
չէ համապատասխանում իր անուան, այսինքն՝
նա երբեք չը տուեց հայ ժողովրդին սահմանա-
դրական իրաւունքներ, ինչպէս շատերը սխա-
լմամբ կարծում են. նրա շօշափելի օգուտը հայ
ժողովրդի համար այն եղաւ, որ վերջ դրեց,
այն էլ մասամբ, ամիրանների կամայականութեա-
նը և պատրիարքի ու առաջնորդների ընտրու-
թիւնը ժողովրդական դարձրեց, այսինքն՝ վերա-
հաստատեց այն իրաւունքը, որ լուսաւորական
եկեղեցին վայելում էր իր հիմնարկութեան օ-
րից: Սակայն այդ Սահմանադրութիւնը երբեք
չը կարողացաւ մի մազաչափ անդամ պակասե-
ցնել սարսափելի բռնաբարութիւնները, հարու-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՏԱԿԱՆ ՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, օգոստոսի 16-ին

Մինչև օգոստոսի 2-ը Թաւրիզում տիրող յու-
զումները յետոյ աւերելով ճանգարաններն էր
երևում: Սակայն դա երկար չը տևեց: 8—10 օր
ժողովուրդն սպասեց հայի ինչորի աջող կար-
գադրութեան՝ առժամայէն հաւատարմով կառա-
վարութեան խոստումներին և պատերի վրա
կապեցված կառավարական յայտարարութիւննե-
րին: Դարձեալ հայ չը կայ, եղածն էլ սովորա-
կանից շատ վատ: Ամենուրեք սպառողական
դրութիւն. կրքերը սաստիկ լարված են. հայ-
թուրքներ խանութներ անում և ամբողջ քա-
ղաքում և մեծ մասը անդոյս և անհայ վերադառնում են տուն. փողը ձեռնե-
րում հայ մուրացողներ անկել են: Նահանգա-
պետ Սմիթ-Նիզամը ցորենատէր հարուստ հողե-
րականներին և պաշտօնեաներին հրաւիրել է
ու ցորեն պահանջել, ի չարս ուրիշների նաև
մեծահարուստ կալուածատէր և բարձրաստիճան
հողերական Նիզամ-Իւլ-Ուլաւային: Պարսից
պետութեան արվելը տասներորդի հատկութիւն՝ հա-
մեմատ հորեայ սովորութեան, ցածր արժեքով
հարուստ կալուածատէրներն են առնում. օրի-
նակ՝ այսօր, երբ ցորենի խաղիւրդ Թաւրիզում
տարբերակներ աւելի է ծախվում, գիւղատե-
րերը վեր են առել կառավարութիւնից 21/2
թումանով: Սմիթ-Նիզամն առաջարկեց ծախել

որոշ քանակութեամբ ցորեն կառավարութեան
իրանց առած արժեքից աւելի բարձր գնով,
մինչև որ նոր հունձը կը վերջանայ. բայց շու-
հանդապետի պահանջը մերժվեց՝ վստահ պար-
սից արքունիքի պաշտպանութեան վրա: Միւս
կողմից մի քանի օրեր խոստումներով ու յայ-
տարարութիւններով անված թուրք ամբարը ներ-
կայ դրութիւնից աւելի և աւելի բարձրացած,
կրակ կտրած կամեցաւ վերջ տալ իր համբե-
րութեանը:

Արդէն ժողովրդին յայտնի էր օրվայ վիճակը:
Օգոստոսի 11-ից կրքերն առաւել սուր կերպ
բանջ տալան. հաւաքումներն ու սպանուիլի
դէպքերը ցոյց էին տալիս մտաւրտ պայթելու:
Սոված հասարակութեան ցոյցերի հանդէպ ցո-
րենատէրերը քար-սիրտ էին եղել և ենթարկ-
վեցին պարսիկ ժողովրդի անողորմ դատաւա-
նին—աւարառութեանը, բայց ոչ առանց դոհի:
Օգոստոսի 12-ի, չորեքշաբթի, առաւօտ կանուխ
սկսվեց հացի յեղ ափսոսի խաղը: Եւ ինչ
Թաւրիզում փակված են. քաղաքը եւ էլ գա-
լիս. թուրք ազգաբնակչութիւնը ոտի վրա է.
հաղաւարտ մարդիկ խմբեր կազմած ուղղւում են
քաղաքի վեր Նիզամ-Իւլ-Ուլաւայի և նրա որդու ու
այն անձի տան վրա, որը դեռ նորեքս պաշա-
վում էր ֆանատիկոս ամբարից իբրեւ մեծահա-
հարուստ և ազդեցիկ անձը, և իբրեւ մեծ հողե-
ւորական-մուշտալի: Առաւօտային ժամը 8-ից
լուսկեց հրացանների որոտում. ժողովուրդը՝ զին-
ված փայտեղով, յարձակվեց, բայց ի գուր: Նի-
զամ-Իւլ-Ուլաւայի տան կողքի վրա 7—8 հրա-
ցանակիր սէյիդներ հողե բլրակների քամակից
գնտակահար էին անում ժողովրդին: Անգէն աւ-

աւել ճար չունէր. չը կարողացաւ մօտենալ
յետ քաղվեց՝ տալով 15—20 ամսեղ զոհեր:
Այդ օրը ժողովուրդը բաւականացաւ միայն նը-
րանով, որ քանդեց ու թալանեց գնտակահար
անող 5 սէյիդների տները: Նոյն օրը Սմիթ-
Նիզամը, Թաւրիզի մուշտալից և ոտակաւա-
պետը անձամբ դիմացին Նիզամ-Իւլ-Ուլաւայի տան
առաջ ու յորդորեցին, որ չըսպանեն մարդկանց,
բայց անեն դոհներ՝ հանդուստեցնելու համար ամ-
բարի բուռն գրգռը, բայց մերժվեցին:

Ժողովուրդը ողջ գիշերը հեռուից պաշարած
սպասեց: Դիշերով Նիզամ-Իւլ-Ուլաւային, որդին
և եղբայրները իրանց ընտանիքներով խոյս էին
տուել դէպի Թէհրան՝ թողնելով իրանց ճոխ ա-
պարանքները՝ լիքը մեծամիտք կարասիներով
ու պաշարներով ամբարի կառավարութեանը...
Փայտել էին և հրացանակիր սէյիդներ ժողովրդի
սպանուիլի վրէժխնդրութիւնից՝ տալով միայն
մի զոհ, սպանված: Օգոստոսի 13-ին, վաղ ա-
ռաւօտ, ամբարը վերջապէս մտաւ Նիզամ-Իւլ-
Ուլաւայի տունը, և շատ ժամանակ չանցած թա-
լանեց և հիմքից կործանեց նրա և իւրակների
տները: Զայրոյթը մասամբ դադարել էր. գոր-
ծադրւել երկրաբարձը, այդպիսով և առհասա-
րակ գործաւորները միջիններեքի մեծ եռան-
գով իրանց տներն էին կրում հարուստ աւարը:
Ներօգական մայրաքաղաքներում կերտված կահ-
կարասիք, բեհեղեայ անկողիններ, Պարսկաստա-
նի ամենալուրտի գործեր քաջ էին տալիս փո-
ղոցներով չը տեսնված ընկերակրութեամբ և
համբարաշխութեամբ: Շէնքի փայտերը, քարե-
րը և աղիւնները մինչև իսկ չը մնային. երեկ-
վայ շքեղ ապարանքի տեղ հիմա մնում է փա-
տակների մի հողակոյտ... Նիզամ-Իւլ-Ուլաւա-

յի ընտանիքը իր աղքեցութեամբ բաւականին
հին է և վերջին տարիները իր նշանակութիւնն ու
հեղինակութիւնը գերազանցօրէն անցյին քան եր-
բեկից այն պատճառով, որ Մուղաֆֆէթդդին
Շահը թագաւառնող ժամանակից շատ դաւա-
ված էր սրանից: Այժման Շահը իր հօր գահը
բարձրանալու համար Թէհրան դառնալով Նիզա-
մ-Ուլաւայի եղբայրներով ու ազգակիցներով
չը շարաւարվեց. սովորների մայրաքաղաքում այժ-
ման պարսից դեսպանը Նիզամ-Իւլ-Ուլաւայի
եղբայրն է. Թէհրանում, Թաւրիզում և այլ ու-
րեք իր եղբայրներն ու որդիները մեծ պաշա-
տեաներ են. մի խօսքով՝ այս ընտանիքը այնպէս
է տարածել իր ցանցերը, որ բունեղ է ամբողջ
Պարսկաստանը: Հետեաւար բնական էր կարծել,
որ այս ու այն կառավարչի աղքեցութիւնները ոչինչ
չէին կարող անել. միայն ժողովրդի կատաղու-
թիւնն է, որ սահման չունի և արդեւ չէ տես-
նում: Նիզամ-Իւլ-Ուլաւայի պէս մի ուժով անձ-
նաւորութեան դէմ ամբողջ այս ցոյցը ոչ միայն,
ինչպէս հայտնւում են, պատճառեց 60—70 հա-
զար թումանի մի վնաս, այլև գրեթէ ջնջեց
այդ հեղինակաւոր ընտանիքի հետ բոլոր պար-
սիկ հողերակաւութեան ոյժն ու աղքեցութիւ-
նը Պարսկաստանում: Մինչև այսօր ոչ եր
համարձակվում խեղճ աչքով նայել խոյս հողե-
րականին, իսկ հիմա ամբարը անողորմ վճիռ է
տալիս հողերակաւների դէմ: Պարսկաստանի նը-
ման փոստ աշխարհում դա մի դարադրու-
կարելի է համարել: Եւ ո՞վ գիտէ, դուք խոր-
տակված կապանքներից պարսիկ թշուառ ժո-
ղովրդի համար ցայտեն յոյսի ու լոյսի նշողներ:
Թաւրիզի ժամանակաւոր սովը իր ճանկերը
ինչ կաւակած, հայերի վրա էլ տարածեց: Փողը

Կ. Պ
«Կրօնա-
Գուրտ»
նեքու
լով, այ
գահէն
նեքուն
բոնցմէ
դադրա-
եպիսկո-
ղաջինե-
փոխու-
պարագ-
է, բայց
ԸԼԱՎՐ

